Տասներկուերորդ հաղորդում

Ապրել Քրիստոսին՝ որպես բարի երկրի վայելելու կյանքով, ինչի արդյունքը տաճարն է՝ Աստծու բնակատեղը, և քաղաքը՝ Աստծու թագավորությունը

Գրվածքների ընթերցում. Բ Կրթ 13:14, 1:12, 4:15, 6:1, 8:1, 9, 9:8, 14, 12:9

I. Կորնթացիներին ուղղված առաջին թուղթը Հին Կտակարանում Իսրայելի զավակների պատմությունն ընդունում է որպես նորկտակարանյան հավատացյալների նախատիպ (5:7-8, 10:1-13), բայց Կորնթացիներին ուղղված առաջին թղթում բարի երկրի վերաբերյալ ցուցում չկա, քանի որ հոգևոր տեսանկյունից՝ բարի երկրի իրականությունը Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթում է.

Ա. Բարի երկրի իրականությունը Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթում Քրիստոսն Ինքն է՝ որպես աստվածային շնորհք. Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթի կենտրոնական միտքն ու թեման է՝ 13:14, 1:12, 4:15, 6:1, 8:1, 9, 9:8, 14, 12:9:

Բ. Ա Կրթ 15:10-ի «ոչ թե ես, այլ Աստծու շնորհքը» արտահայտությունը հավասարազոր է Գղտ 2:20-ի «այլևս ոչ թե ես.... այլ Քրիստոսն է» արտահայտությանը. շնորհքը, որ առաքյալի շարժիչ ուժն ու նրա մեջ գործողն էր, ոչ թե ինչ-որ հասկացողություն կամ առարկա էր, այլ կենդանի անձ (Հվի 1:16-17)՝ հարուցանված Քրիստոսը՝ Հայր Աստծու մարմնավորումը (Կոլ 2:9, Հվի 14:7-11), ով համաբովանդակ կենդանարար Հոգին դարձավ (Ա Կրթ 15:45բ, Բ Կրթ 3:17), և ով բնակվում էր առաքյալի մեջ նրա զորացնող վայելքի համար (Բ Տմթ 4:22, 2:1):

Գ. Շնորհքն Աստված է Քրիստոսի մեջ որպես Հոգին՝ տրված մեզ մեր վայելքի համար, որ մեզ եռանդ է հաղորդում, ընդունակ է դարձնում, սատարում ու ամրապնդում է, որպեսզի դիմակայենք ցանկացած խնդրի, պիտանի լինենք ցանկացած իրավիճակում, դիմանանք ցանկացած վերաբերմունքի, ընդունենք ցանկացած միջավայր, աշխատենք բոլոր պայմաններում և օգտագործենք ամեն մի հնարավորություն, որպեսզի լինենք լավ տնտեսվարներ, որոնք Աստծու տարատեսակ շնորհքը բաշխում են ուրիշների մեջ եկեղեցու՝ որպես Աստծու տան և Աստծու թագավորության կառուցման համար՝ Ա Կրթ 15:10, Բ Կրթ 1:3-12, 12:7-9, Ա Պտ 4:10, Եփս 3:2:

II. Մենք պետք է տեսնենք, թե ինչպես Աստծու առջև ապրենք մի կյանքով, որը մեզ թույլ կտա վայելել համաբովանդակ Քրիստոսին, ում նախատիպը բարի երկիրն է՝ Կոլ 1:12, 2:6-7ա.

Ա. Մենք պետք է ապրենք Քրիստոսի վրա տքնելու կյանքով, Քրիստոսին անձնապես վայելելու կյանքով, որպեսզի համատեղ կերպով վայելենք Նրան՝ կառուցելու համար Քրիստոսի Մարմինը՝ որպես կենդանի Աստծու տաճարը՝ տունը՝ Ա Կրթ 3:16, Ա Տմթ 3:15:

Բ. Աստծու կամքն այն է, որ վայելենք Քրիստոսին (Եբր 10:5-10, Ա Կրթ 1:9). մենք պետք է ձգտենք վայելելու Քրիստոսին և փորձառաբար ապրելու Նրան ամեն իրավիճակում (Փլպ 3:7-14):

Գ. Քրիստոսն անչափելիորեն հարուստ է, բայց եկեղեցին այսօր «քարշ է գալիս» աղքատության մեջ, որովհետև Տիրոջ զավակներն ալարկոտ են՝ Առկ 6:6-11, 24:30-34, 26:14, Մտթ 25:26, 30:

Դ. Ամեն անգամ, երբ հավաքույթների ենք գալիս՝ Տիրոջը երկրպագելու, մենք չպետք է դատարկաձեռն գանք. մենք պետք է գանք Քրիստոսի արգասիքով լի ձեռքերով՝ Երկ Օր 16:15-17.

1. Մենք պետք է նրան բավականաչափ արտադրենք, որպեսզի հավելուրդ լինի աղքատների և կարիքավորների, քահանաների և ղևտացիների համար, իսկ դրա լավագույն բաժինը՝ Տիրոջ համար՝ 15:11, 18:3-4, 12:11:
2. Աստծուն Քրիստոսով երկրպագել նշանակում է Նրան երկրպագել Աստծու բոլոր զավակների հետ համատեղ՝ Քրիստոսին վայելելով իրար հետ ու Աստծու հետ՝ Ա Կրթ 14:26:

Ե. Եթե ուզում ենք հաղթողներ լինել, պետք է տքնենք Քրիստոսի՝ որպես մեր բարի երկրի վրա, ձեռք բերենք Քրիստոսին՝ որպես մեր վայելքի.

1. Ամեն առավոտ պետք է մեզ անկեղծորեն նվիրաբերենք Տիրոջը՝ Նրան վայելելու և փորձառաբար ապրելու պարզ նպատակով՝ հմմտ Փլպ 3:13-14:
2. Ամեն օր մենք պետք է ժամանակ հատկացնենք, որպեսզի մեկուսի ու ծածուկ կերպով լինենք Տիրոջ հետ՝ Նրա հետ մտերմիկ հաղորդակցություն ունենալու համար՝ Մտթ 14:22-23, 6:6, Ելց 33:11ա:
3. Մենք պետք է ամեն օր վաղ առավոտյան Տիրոջը վայելենք Խոսքի մեջ, որպեսզի յուրաքանչյուր օր նոր մեկնարկ ունենանք՝ Սղմ 119:147-148:
4. Մենք պետք է հանգամանորեն աշխատենք մեղքերի վրա, որպեսզի մեր և Տիրոջ միջև ոչինչ չկանգնի՝ Ա Հվի 1:7, 9, հմմտ Եզկ 1:22, 26:
5. Մենք պետք է ամեն պահ պահպանենք Տիրոջ հետ մեր հաղորդակցությունը՝ աղոթքի կյանք ապրելով՝ Բ Կրթ 13:14, Փլպ 4:6-7, Ողբ 3:55-56, հմմտ Մտթ 11:25-26:
6. Մենք պետք է փրկագնենք մեր ժամանակը և մեր եռանդը ծախսենք, որպեսզի հագենանք ու ներծծվենք Աստծու սուրբ Խոսքով՝ Բ Տմթ 3:16-17, Կղս 3:16:
7. Մենք պետք է փրկագնենք ժամանակը, որպեսզի լցվենք հոգում՝ միշտ ուրախանալով, անդադար աղոթելով և ամեն ինչում գոհաբանելով՝ Եփս 5:18, Ա Թսղ 5:16-19:
8. Որպեսզի փորձառաբար ապրենք Քրիստոսի՝ որպես բարի երկրի հարստությունը, մեր հոգին պետք է իշխի մեզ վրա, կառավարի, ուղղորդի, շարժի և առաջնորդի մեզ՝ Բ Կրթ 2:13:

9. Որպեսզի փորձառաբար ապրենք Քրիստոսի՝ որպես բարի երկրի հարստությունը, մենք պետք է ապրենք Քրիստոսի անձի, ներկայության, երեսի մեջ՝ խ. 10, 4:6-7, 3:16-18, 12:2ա.
   ա. Որպեսզի տիրենք Քրիստոսին՝ որպես համաբովանդակ երկրի, մենք պետք է կառավարվենք Նրա անձով, Նրա ներկայությամբ՝ Ելց 33:14:
   բ. Քանի որ Պողոսն ապրում էր Քրիստոսի անձի մեջ, նա փորձառաբար ապրում էր Քրիստոսին՝ որպես անփոփոխության (Բ Կրթ 1:17-20), որպես հեզության և մեղմության (10:1), որպես ճշմարտացիության (11:10), որպես զորության (12:10, 13:4), որպես շնորհքի (խ. 14) և որպես իր մեջ Խոսողի (խ. 3, հմմտ 2:17):
10. Մենք ընդունում ենք Քրիստոսին՝ որպես շնորհքի՝ բարի երկրի իրականության, Սուրբ Հոգու ջախջախող ու կազմող աշխատանքի միջոցով, որի արդյունքում մեր ներքին էությունը վերակառուցվում է Աստվածային Երրորդությամբ՝ 12:7-10, 13:14:

III. Մենք պետք է հավաքվենք, որպեսզի ի ցույց դնենք այն Քրիստոսին, ում վրա տքնել ենք, այն Քրիստոսին, ում վայելել ու փորձառաբար ապրել ենք՝ Երկ Օր 14:22-23.

Ա. Երբ մեր ամենօրյա կյանքում անձնապես վայելում ենք Քրիստոսին՝ մեր հավաքույթի կյանքում Նրան համատեղ վայելելու համար, Աստված մեր միջավայրում է, և մենք Նրա բնակատեղն ու Նրա թագավորությունն ենք:

Բ. Երբ այդ աստիճան վայելում ենք Քրիստոսին, եկեղեցական հավաքույթը լցվում է Աստծով, և ինչ էլ հավաքույթին անում ենք, դա Աստծուն բերում ու փոխանցում է մարդկանց, որպեսզի նրանք Աստծով ներարկվեն՝ Ա Կրթ 14:25:

Գ. Աստծու՝ Իր ժողովրդի կողմից մատուցվող ճշմարիտ երկրպագությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ բոլորը լի են Քրիստոսով, փայլում են Քրիստոսով և ի ցույց են դնում այն Քրիստոսին, ում վրա տքնել են:

Դ. Մենք պետք է միշտ բոլոր հավաքույթներին խոսելու ինչ-որ բան ունենանք՝ որպես կամավոր ընծա Աստծուն և բոլոր ներկաներին՝ խ. 26.
   1. Նախքան հավաքույթի գալը մենք պետք է պատրաստվենք հավաքույթին՝ Տիրոջից ինչ-որ բան ունենալով՝ կա՛մ Նրան մեր փորձառաբար ապրելու միջոցով, կա՛մ էլ Նրա խոսքը մեր վայելելու ու Նրա հետ աղոթքում մեր հաղորդակցության միջոցով պատրաստած ինչ-որ բանով:
   2. Հավաքույթի գալուց հետո մենք չպետք է սպասենք ներշնչանքի. մենք պետք է վարժենք մեր հոգին և օգտագործենք մեր ուսուցանված միտքը, որպեսզի գործառույթ կատարենք՝ ներկայացնելով այն, ինչ պատրաստել ենք, Տիրոջը՝ Իր փառքի և բավարարության համար, և ներկաներին՝ նրանց օգուտի համար, այսինքն՝ նրանց լուսավորման, սնուցման և կառուցման համար՝ խխ. 31-32:

IV. Մենք պետք է Տիրոջ զավակների հետ հավաքվենք համատեղ երկրպագության համար այն վայրում, որը Տերն է ընտրել՝ մեր հոգում և միասնության եզակի հողի վրա՝ Երկ Օր 12:5, 11, 13-14, 18, 16:16, Հվի 4:24.

Ա. Նախ՝ Աստծու սրբարանը՝ Նրա բնակության վայրը, մեր հոգում է (Եփս 2:22), և երկրորդ՝ այն եկեղեցին է (Ա Տմթ 3:15). ուստի Աստծու սրբարանը մտնելու համար անհրաժեշտ է շրջվել մեր հոգուն և գնալ եկեղեցու հավաքույթներին. մեր հոգում և եկեղեցում աստվածային հայտնություն ենք ստանում և գտնում մեր բոլոր խնդիրների բացատրությունը (Սղմ 73:16-28):

Բ. Մենք պետք է պահենք Քրիստոսի Մարմնի եզակի միասնությունը եզակի հողի վրա.

1. Եկեղեցական կյանքի կիրարկումը մեկ քաղաքում մեկ եկեղեցի՝ մեկ քաղաք՝ մեկ եկեղեցով հանդերձ, ունենալու կիրարկումն է՝ Գրծ 8:1, 13:1, Ա Կրթ 1:2, Հյտ 1:11:
2. Միասնության եզակի հողի վրա վայելում ենք Տիրոջը՝ որպես օծության յուղի, թարմացնող ցողի և կյանքի պատվիրված օրհնության՝ Սղմ 133:

Գ. Գոյություն ունի Տիրոջ ընտրած վայրի չորս առանձնահատկություն.

1. Տիրոջ ընտրած վայրը չպետք է Քրիստոսի անունից զատ այլ անուն ունենա՝ Երկ Օր 12:5, Հյտ 3:8:
2. Տիրոջ ընտրած վայրը լցված է հոգու վարժանքով՝ Եփս 2:22, Հվի 4:24, Ա Տմթ 4:7, Ա Կրթ 14:32:
3. Տիրոջ ընտրած վայրը Քրիստոսի հարստությունը վայելելու վայր է՝ Երկ Օր 12:7, 18, Սղմ 36:8-9:
4. Տիրոջ ընտրած վայրը ուրախության վայր է՝ Երկ Օր 12:7, 12, 18, Սղմ 42:4, 122:1:

V. Քրիստոսի՝ որպես բարի երկրի համաբովանդակ հարստությունը մեր փորձառաբար ապրելու արդյունքը եկեղեցին է՝ որպես տաճարը, Աստծու բնակատեղը, և քաղաքը՝ Աստծու թագավորությունը՝ Եփս 2:21-22.

Ա. Երկիրը, իր տաճարով ու քաղաքով հանդերձ, Աստծու ծրագրի կենտրոնն է՝ Գ Թգ 8:48 և ծթգ 1.

1. Երկիրը Քրիստոսն Ինքն է, իսկ տաճարը և քաղաքը Քրիստոսի լեցունությունն են՝ եկեղեցին, որը Նրա Մարմինն է՝ 1:22-23, 2:21-22:
2. Տաճարն Աստծու արտահայտության համար է, իսկ քաղաքը՝ Աստծու տիրակալության. սա իրականացնում է Աստծու հավիտենական մտահղացումը՝ Ծնդ 1:26:

Բ. Աստծու տան՝ Նրա արտահայտության համար եղող Նրա բնակատեղի գլխավոր տեսանկյունները խոսում են Աստծու ներկայության մասին.

1. Աստծու տունը Աստծու ներկայության, այսինքն՝ Աստծու փառքի (Սղմ 26:8, 29:9), Աստծու գեղեցկության (27:4, 8) և Աստծու հարստության (36:8-9) վայրն է:

2. Աստծու տունը հայտնության և Աստծու պատասխանի վայրն է՝ 73:16-17, 3:4, 18:6:
3. Աստծու տունը մեր թաքստոցն է՝ 27:5, հմմտ 31:20, 84:3:
4. Աստծու տունն այն վայրն է, որտեղ մենք կարող ենք տնկվել, փթթել և պտղաբերել՝ 92:13-14:
5. Աստծու տունն աղբյուրների վայրն է՝ 87:7:
6. Աստծու տունն այն վայրն է, որտեղ ամրապնդվում ենք՝ 68:35, 96:6:
7. Աստծու տունն այն վայրն է, որտեղ միաձուլվում ենք Աստծու հետ՝ 92:10:
8. Աստծու տունն այն վայրն է, որտեղ Աստված մեր բաժինն է՝ 73:26:

Գ. Աստծու քաղաքի՝ Նրա տիրակալության համար եղող Նրա թագավորության գլխավոր տեսանկյունները խոսում են Աստծու իշխանության մասին.

1. Աստծու քաղաքն ամուր քաղաք է, մեծ Արքայի քաղաքն է՝ 31:21, 48:2:
2. Աստծու քաղաքում ուրախացնող վտակներով գետ կա՝ 46:4-5:
3. Աստված այնտեղ ճանաչել է տալիս Իրեն, և Աստված բարձր ապաստան է այնտեղ՝ 48:3:
4. Այն սարսափ է թշնամու համար՝ խխ. 3-6, 76:2-3:
5. Այն գեղեցկության կատարելությունն է՝ 50:2:
6. Այն Աստծու հաճության նպատակն է՝ 51:18:
7. Աստծու քաղաքում դատաստանի գահերն են՝ 122:5:
8. Տերն այնտեղից օրհնում է ուրիշներին, և Տերն օրհնվում է այնտեղից՝ 134:3, 135:21:

VI. Քրիստոսին՝ որպես երկրի, վայելելու վերջնական արդյունքը պատրաստված Եռամեկ Աստծու աստվածամարդկային ընդհանրականությունն է Իր վերածնված փոխակերպված և փառավորված եռամաս մարդկանց հետ՝ որպես Աստծու հավիտենական բնակատեղն ու թագավորությունը՝ Հյտ 21:3, 22, 22:5:

© 2023 Living Stream Ministry